Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 18-04-2025 թ. որոշմամբ
ՀՀ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Մ. ԽՈՐԵՆԱՑԻ, «ԷԼԻՏ ՊԼԱԶԱ» ԲԿ 15 7-ՐԴ ՀԱՐԿ
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01020
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2008-10-07
1.5 ՀՎՀՀ-ն		02706031
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)41520278
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.fsm.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@fsm.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Վազգեն Մնացականյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	57	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք	1,338,442,947
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	200,000	

Digitally signed by MIRZAKHANYAN GOHAR 6605720253
Date: 2025.04.22 18:58:48 AMT

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը	1,008,966,633	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,008,966,633	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,008,966,633	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___7___ էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
2, Vazgen Sargsyan St.,
Kamar Business Center,
Yerevan, 0010, Armenia
Tel: +374 60 50 7777
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և հոգաբարձուների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հոգաբարձուների Խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

A member firm of Ernst & Young Global Limited

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Հոգաբարձուների Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Դմիտրո Յուրգելևիչ

31 մարտի, 2025թ.

A member firm of Ernst & Young Global Limited

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	171,884	220,775
Ոչ նյութական ակտիվներ	0	13,493	14,206
Երկարաժամկետ պետական պարտատոմսեր	10	–	550,584
Ոչ ընթացիկ ակտիվներ		**185,377**	**785,565**
Պաշարներ		5,941	6,012
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	9	4,877	12,921
Կարճաժամկետ պետական պարտատոմսեր	10	1,611,531	640,889
Մնացորդներ բանկերում	8	194,274	311,008
Ընթացիկ ակտիվներ		**1,816,623**	**970,830**
Ընդամենը ակտիվներ		**2,002,000**	**1,756,395**
Պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	11	38,436	109,102
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**38,436**	**109,102**
Կրեդիտորական պարտքեր	12	115,545	118,435
Վարձակալության գծով պարտավորություն	11	70,666	63,065
Շահութահարկի գծով պարտավորություն		25,317	10,608
Ընթացիկ պարտավորություններ		**211,528**	**192,108**
Զուտ ակտիվներ			
Պահուստային կապիտալ		1,255,185	1,020,782
Չբաշխված շահույթ		496,851	434,403
Ընդամենը զուտ ակտիվներ		**1,752,036**	**1,455,185**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**2,002,000**	**1,756,395**

Հաստատվել և ստորագրվել է ղեկավարության կողմից՝

Վազգեն Մնացականյան
Ֆինանսական համակարգի
գլխավոր հաշտարար, Գրասենյակի
կառավարիչ

Գոհար Միրզախանյան
Գլխավոր հաշվապահ

31 մարտի, 2025թ.

1-20 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ.	2023թ.
Գործառնական եկամուտ	**13**	**1,347,307**	**1,209,813**
Այլ եկամուտ		865	248
Ֆինանսական հաստատություններին վերադարձված գումարներ		(200,000)	(200,000)
Հատուցումներ աշխատակիցներին	15	(587,253)	(530,013)
Կրթական ծրագրերի ծախսեր		(40,363)	(33,202)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր		(47,727)	(42,913)
Կոնֆերանսի կազմակերպման ծախսեր		(15,551)	(12,253)
Վարձակալություն		(16,115)	(11,338)
Գործուղման և վերապատրաստման ծախսեր		(23,926)	(32,024)
Ներկայացուցչական ծախսեր		(9,937)	(8,405)
Մաշվածություն և ամորտիզացիա	6,7	(89,797)	(81,762)
Պահանջների քննությանը ներգրավված մասնագետների (փորձագետների) ծառայությունների դիմաց վճարներ		(50,884)	(51,903)
Խորհրդատվություն		(7,000)	(8,517)
Գրասենյակային ծախսեր	14	(51,270)	(43,090)
Այլ ծախսեր		(13,077)	(8,496)
Գործառնական շահույթ		**195,272**	**146,145**
Ֆինանսական եկամուտ	16	144,013	120,020
Ֆինանսական ծախս	16	(16,373)	(10,114)
Շահույթ մինչև հարկումը		**322,912**	**256,051**
Շահութահարկի գծով ծախս	17	(26,061)	(21,648)
Տարվա շահույթ		**296,851**	**234,403**
Այլ համապարփակ եկամուտ		–	–
Ընդամենը համապարփակ եկամուտ		**296,851**	**234,403**

1-20 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Պահուստային կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**812,901**	**407,881**	**1,220,782**
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	–	234,403	234,403
Հատկացումներ պահուստին	207,881	(207,881)	–
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,020,782**	**434,403**	**1,455,185**
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	–	296,851	296,851
Հատկացումներ պահուստին	234,403	(234,403)	–
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,255,185**	**496,851**	**1,752,036**

1-20 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա շահույթ		296,851	234,403
Ճշգրտումներ՝			
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս		(597)	157
Մաշվածություն և ամորտիզացիա	6,7	89,797	81,762
Ֆինանսական եկամուտ	16	(144,013)	(120,020)
Ֆինանսական ծախս	16	16,373	10,114
Շահութահարկի գծով ծախս	17	26,061	21,648
Այլ (եկամուտ)/ծախսեր		(664)	1,859
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		**283,808**	**229,923**
Շրջանառու կապիտալի փոփոխությունները			
Դեբիտորական պարտքերի և կանխավճարների փոփոխություն		8,044	(9,851)
Պաշարների փոփոխություն		71	(4,329)
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն		(5,043)	17,325
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		**286,880**	**233,068**
Վճարված շահութահարկ		(11,351)	(12,019)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**275,529**	**221,049**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(38,205)	(10,386)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		769	248
Պետական պարտատոմսերի ձեռքբերում		(1,601,074)	(792,778)
Պետական պարտատոմսերի մարումից մուտքեր		1,325,685	627,576
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(312,825)**	**(175,340)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարձակալական վճարներ	11	(79,438)	(69,910)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(79,438)**	**(69,910)**
Բանկերում մնացորդների զուտ նվազում		(116,734)	(24,201)
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում		**311,008**	**335,209**
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	**8**	**194,274**	**311,008**

1-20 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 22.04.2025 18:57